«Քարտս ու ես» արշավի մասին մանրամասներ

Ներածություն

- ԱրարատԲանկը 2026 թվականի նոյեմբերի 01-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Mastercard Student Card (gold) քարտատեսակի քարտապանների համար մեկնարկում է «Քարտս ու ես» արշավ,
- Արշավի մասնակից և Mastercard Student Card (gold) քարտի քարտապան կարող են հանդիսանալ 18-25 տարեկան ուսանողները,
- Արշավը իրականացվելու է սույն թվականի նոյեմբերի 1-ից մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Ընդհանուր դրույթներ

- Քարտապանների համար իրականացվող Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է www.araratbank.am կայքում:
- Արշավին մասնակցության համար որևէ վճար սահմանված չէ:
- Հաղթող մասնակիցներին հաստատում է ԱրարատԲանկը՝ համապատասխան տվյալների ստուգումներն իրականացնելուց հետո: ԱրարատԲանկն իրավասու է կապ հաստատել հաղթող մասնակցի/ների հետ՝ նրանց նույնականացնելու, իսկությունը հաստատելու համար, որից հետո միայն մրցանակը հանձնելու: Եթե հաղթող մասնակիցը չի պատասխանում հեռախոսազանգին (առավելագույնը 3 զանգ), հրաժարվում է ներկայանալ կամ նրա պատասխանների մեջ նկատվում է անհամապատասխանություն, ապա Բանկն իրավասու է տվյալ մասնակցի հաղթանակը չեղյալ համարել:

Մասնակցության պայմաններ

- Արշավին կարող են մասնակցել ԱրարատԲանկի այն Mastercard Student Card (gold) քարտապանները, ովքեր նոյեմբերի 1-ից մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Mastercard Student Card (gold) քարտով կիրականացնեն անկանխիկ գործարքներ:
- Արշավի ընթացքում որպես վճարում չեն դիտարկվում վարկի մարումները (վարկի մայր գումարի, տոկոսի մարում և այլն), հեռահաղորդակցման ծառայությունների (հեռախոս, ինտերնետ, tv), կոմունալ ծառայությունների վճարումները (գազ, էլ.էներգիա, ջրմուղ-կոյուղի և այլն), էլեկտրոնային փողերը, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, օրենքով պարտադրված վճարները, մուծումները, պետական և տեղական բյուջե ուղղված հարկերի և տուրքերի, տուգանքների վճարները, կազինո և շահումով խաղերը, խաղադրույքները, ապահովագրությունը:
- Վճարումների հաշվարկը կատարելու համար հիմք է ընդունվելու վճարման կատարման ամսաթիվը:
- Արշավի շրջանակում յուրաքանչյուր հաճախորդին կտրամադրվի սույն Պայմաններով սահմանված առավելագույնը մեկ մրցանակ: Մրցանակը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

- Գովազդային վիճակախաղի հաղթողները կորոշվեն պատահականության սկզբունքով՝ առցանց ծրագրի միջոցով (օրինակ՝ Comment Picker կամ նմանատիպ ծրագիր):
- Գովազդային վիճակախաղի ամփոփումը կցուցադրվի ԱրարատԲանկի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերով՝ ուղիղ հեռարձակմամբ: Հեռարձակման օրը և ժամը կհրապարակվի նախապես՝ Բանկի սոցիալական էջերում:
- Գովազդային վիճակախաղը կամփոփվի և մրցանակները հաղթողներին կհանձնվեն մինչև 2027 թվականի փետրվարի 9-ը (եթե հաղթող մասնակիցը մինչ այդ ժամկետը ներկայանա Բանկ):
- Գովազդային վիճակախաղի ամփոփման ընթացքում հաղթող ոչ համապատասխան մասնակիցների կամ հաղթող այն մասնակիցների դեպքում, ովքեր կհրաժարվեն նվերից, Բանկն իրավասու է՝ անհրաժեշտությունից ելնելով ծրագրի միջոցով ընտրել նոր մասնակիցներ:
- Արշավին չեն մասնակցում ԱրարատԲանկի աշխատակիցները:

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի կամ «Քարտս ու ես» արշավի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել www.araratbank.am կայք կամ զանգահարել 010 59 23 23 շուրջօրյա հեռախոսահամարով, WhatsApp/Viber +374 41 59 23 25/+374 98 19 23 23 հեռախոսահամարներով:

«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: